Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորումը տարրական դպրոցում

Առարկա՝ Դասվար

Հեղինակ՝ Գեղեցիկ Ստեփանյան

Ուսումնական հաստատություն՝ Վահան գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Սևան 2023

Բովանդակություն

2

Ներածություն

Գլուխ 1.Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման մեթոդական քայլաշարը գրաճանչության ընթացքում

1.1 Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դպրոցի մայրենիի դասընթացում 3

1.2 Կարդալու տարրական կարողության ձևավորումը որպես մայրենիի դասի կարևոր նպատակ 5

Գլուխ 2.Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման գործընթացի ուղղությամբ մեր ուսումնասիրությունների արդյունքները

2.1 Կարդալու կարողության զարգացման հիմնախնդիրը տարրական դպրոցում 14

2.2 Կարդալու կարողությունը որպես ուսումնական գործունեության իրականացման հիմք 15

2.3 Մեթոդական ցուցումներ, որոնք կնպաստեն տարրական դպրոցում սովորողների արտահայտիչ կարողության ձևավորմանը 18

2.4 Արտահայտիչ կարդալու կարողությունների զարգացումը հետաքրքրաշարժ հնարներով 20

Եզրակացություններ 20

Առաջարկություններ 21

Օգտագործված գրականություն 21

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Արտահայտիչ կարդալը կարող է ձևավորվել միայն հասկանալով կարդալու արդյունքում: Այն սկսվում է զարգանալ դեռևս գրաճանաչության ընթացքում: Սակայն դասավանդման ընթացքում համոզվել ենք, որ ուսուցման գործընթացում ոչ միշտ է կարևորվում այդ աշխատանքը, որի պատճառով երեխաները ոչ միայն արտահայտիչ չեն կարդում, այլև չեն հասկանում իրենց կարդացածը: Այսպիսով, մեր թեմայի արդիականությունը պայմանավորված է գրաճանաչության ընթացքում արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման անհրաժեշտությամբ:

Մեր նպատակն է մշակել՝

- գրաճանաչության ընթացքում առաջին դասարանցիների արտահայտիչ կարդալու կարողության ձևավորմանը միտված մեթոդական քայլաշար՝ կարևորելով հասկանալով կարդալու կարողության խնդիրը:

Նպատակին հասնելու համար ունենք հետևյալ խնդիրները

1. Ուսումնասիրել արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման գործընթացը տարրական դասարաններում և դիտարկել արդյունքները:
2. Մշակել գրաճանաչության դասերի պլաններ, դրանց հիման վրա վարել փորձարարական դասեր:
3. Մշակել մեթոդական ցուցումներ:

Ուսումնասիրության օբյեկտը՝

- կրտսեր դպրոցականների արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման գործընթացն է՝ իր բազմաբնույթ խնդիրներով:

Ուսումնասիրության առարկան՝

- տարրական դպրոցի սովորողների արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման մեթոդներն ու միջոցներն են:

Ուսումնասիրության ընթացքում կիրառած մեթոդները՝

- մասնագիտական գրականության ուսումնասիրում,
- դասերի ունկնդրումներ,
- փորձարարական դասերի վարում, արդյունքների վերլուծություն:

Ուսումնասիրության նորույթը.

Արտահայտիչ ընթերցողության կարողության ձևավորման գործընթացը դիտարկել ենք որպես հասկանալով կարդալու կարողության զարգացման արդյունավետ ուղի:

Գլուխ 1.Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման մեթոդական քայլաշարը գրաճանաչության ընթացքում

1.1 Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դպրոցի մայրենիի դասընթացում

Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման հիմնական նպատակն է՝

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները՝ որակական հատկանիշների պահպանմամբ,
- մաքրել, հղկել և հարստացնել նախադպրոցական տարիքում և գրաճանաչության ողջ ընթացքում երեխաների ձեռք բերած բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու՝ բանավոր և գրավոր, ունակությունը,
- ձևավորել բարեկիրթ խոսքի մշակույթ,
- ապահովել մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմաններ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական միտքը հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ պարզ դատողություններ անելու կարողություններ,
- ձևավորել ձեռք բերած բարոյական արժեքներին հետևելու անհրաժեշտության գիտակցություն, դրանցող կյանքում առաջնորդվելու ունակություն,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը,

- աշխարհաճանաչողական տարաբնույթ տեղեկությունների միջոցով ձևավորել պատկերացումներ շրջապատի, բնական և հասարակական երևույթների, մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին
- ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը,
- սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները՝ գիտելիքները, փորձը, ձեռքբերումները, գիտակցել մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռքբերման կարողությունն ու անհրաժեշտությունը:

Փաստորեն I-IV դասարաններում մայրենիի ծրագրային նյութերի յուրացման արդյունքում աշակերտը պետք է հանդես գա ոչ թե իբրև գիտելիքների ձեռքբերման գործընթացի պասիվ մասնակից, այլակտիվ գործընկեր, գիտելիքներ ձեռք բերող, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն, ուսումնական գործընթացի գործուն մասնակից:[1]

Յու. Կ. Բաբանսկին ուսուցման մեթոդների մեջ առանձնացնում է հատուկ խթան-մեթոդներ և դրանք խմբավորում է այսպես.

1. Ուսումնահիմացական գործունեության կազմակերպման և իրականացման մեթոդներ:
2. Ուսումնահիմացական գործունեության խթանման և դրդապատճառային մեթոդներ:[2]
3. Կարևորել մայրենիի ուսումնասիրման գործընթացում մասնավորապես աշակերտական նպատակների իրականացմանը մղող խթանները, որոնք աշակերտին մղում են սովորելու: Հոգեբաններն ու մանկավարժները գտնում են, որ միևնույն նպատակները կարող են իրականացվել տարբեր դրդապատճառ-խթանիչներով, և դրանք

[1]Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018, էջ 93-94:
[2]Бабанский Ю. К., Проблемное обучение как средство повышения эффективности учения школьников, Ростов-на-Дону, 1970, с.5.

կարող են աշակերտի ցանկացած գործունեության արդյունավետության վրա տարբեր կերպ ազդել:[3]

1.2 Կարդալու տարրական կարողության ձևավորումը որպես մայրենիի դասի կարևոր նպատակ

Կարդալու կարողության ձևավորումը տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակն է: Գրաչանաճության այբբենական շրջանում ձևավորվում է երեխաների կարդալու նախնական կարողությունը: Նրանք կարողանում են կարդալ փոքրածավալ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Այս ամենը աշակերտներին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասերին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տողն ընթերցելիս հմուտ ընթերցողի աչքերը կատարում են 3-6 կանգառ, որոնց ժամանակ տեղի են ունենում կարդացածի գիտակցում՝հասկացում և ըմբռնում: Անհասկանալի մտքի կամ բառի դեպքում, բնականաբար, ընթերցողի աչքերը կրկնում են շարժումը՝ վերդառնալով ընթերցածին:

Հոգեբաններն ու մեթոդիստներն առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման 3 փուլ՝ **վերլուծական, համադրական և ավտոմատացված**:

Առաջին՝ վերլուծական փուլում տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը՝ նայած, թե ընթերցողը վանկերով է կարդում, թե տառերով: Համադրական փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը. ընթերցողը կարդում է ամբողջական բառերով, իսկ ավտոմատացված կարդալու ժամանակ կարդալու միավորը նախադասությունն է. ընթերցողը կարդում է նախադասություններով:

Կարդալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով՝ մտածողություն, հիշողություն, կամք, զգացմունք և այլն:

Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրն այնպիսի ընթերցողի ձևավորումն է, որը կարդալու ընթերցում ձեռքբերած տեղեկատվությունը մշակում է,

[3]ԳյուլամիրյանՋ., Մայրենիիտարրականուսուցմանմեթոդիկա, Երևան, 2018, էջ 94:

իմաստավորում է և օգտագործում: Կարելի է նկատի ունենալ, որ ճանաչողության տեսությունների համաձայն՝ մարդու մտավոր կարողության մակարդակը որոշվում է նաև իր ձեռքբերած տեղեկատվությունը իմաստավորելու ունակությամբ:[4]

Կարդալու կարողության ձևավորման գերխնդիրը կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է:

Լավ կարդալը կարդալու կարողության բարձր մակարդակն է: Այն ունի որոշակի բնութագրիչներ, որոնք ներկայացնում են կարդալու որակները:

Լավ կարդալն ունի մի շարք որակական հատկանիշներ, որոնք սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: **Լավ կարդալու** որակներն են.



1. **Ճիշտ կամ անսխալ կարդալ** ասելով՝ հասկանում ենք բնագրի՝ բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտը բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի ու տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը, այսինքն՝ գոյականի հոլովը, թիվը, բայի դեմքը, թիվը, ժամանակը, երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ կարդալիս նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառի մեջ վանկերը և նախադասությունների մեջ բառերը ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի

[4]Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան,2018, էջ 102:

արտասանության չափանիշներին համապատասխան՝ պահպանելով հայերենի ուղղախոսության կանոնները: Կարդալու նախնական փուլում երեխաները հաճախ շփոթում են տառերը կամ ճիշտ չեն ընկալում դրանք, որի պատճառով նախադասության միտքն աղավաղվում է: Օրինակ՝ կառք-կարգ,, ուշ-ուժ, կրունկ-կռունկ և այս կարդի այլ սխալները կանխելու համար աշակերտներին պետք է սովորեցնել բառը կարդալ մինչև վերջ, ամբողջապես ընկալել բառապատկերը և միայն դրանից հետո այն արտաբերել:

2. **Գիտակցորեն կամ հասկանալով** կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել՝ պահպանելով ստեղծագործության մեջ ներկայացված մտքերի, դեպքերի հաջորականությունը, տրամաբանական և պատճառահետևանքային կապերը: Մայրենիի դասի գլխավոր խնդիրը կրտսերդպրոցականների կարդալու կարողության ձևավորումն է, որը ներկայացնում է որպես ազատ, անկաշկանդ գործունեություն: Այն իրականանում է կարդացած բնագրի շուրջ նրա հեղինակի հետ երկխոսությունների մեջ մտնելու ճանապարհով՝ ձևավորելով ընթերցողական ընդարձակ և բազմաբնույթ հետաքրքրություններ:[5] Ընթերցելն օգնում է երեխային մտածել ամենաբազմազան խնդիրների շուրջ, խնդիրներ, որոնց նա իր առօրյա կյանքում հաճախ չի բախվում. «Ընթերցելը մեկ ուրիշի օգնությամբ մտածելու արվեստ է, քանի որ կարդալ նշանակում է մտածել հեղինակի հետ միասին»[6]:

3. **Վարժ կամ սահուն կարդալ** ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց անհարկի դադարների, անհրաժեշտ չափով արագ ու սահուն ընթերցումը: Կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեքստի կռահմանը: Տառերով կամ վանկերով, անհարկի դադարներով, խիստ դանդաղ կամ արագ կարդալը խոչընդոտում է բնագրի բովանդակության գիտակցական յուրացմանը: Հենց այդ պատճառով էլ սահուն կամ վարժ կարդալը կարդալու որակական հիմնական հատկանիշներից է: Սկսնակ ընթերցողից երբեք չպետք է պահանջել, որ նա կարդա արագ: Ուսուցման այս շրջանի գլխավոր նպատակը պետք է լինի կարդալու ճշտության ապահովումը, ոչ թե

[5]ԳյուլամիրյանՋ., Մայրենիիտարրականուսուցմանմեթոդիկա, Երևան, 2018, էջ 103-105:
[6]ԳյուլամիրյանՋ.,Կարդալուկարողությանևխոսքիզարգացումըտարրականդասարաններում, Ե., Լույս, 1998, էջ 4:

արագությունը: «Ուսուցչի գլխավոր հոգատարաությունը ոչ թե կարդալու ճշտությունը պետք է լինի, իսկ արագությունը կգա ինքնըստինքյան՝ որպես արդյունք կարդալու բազմաթիվ ու բազմապիսի վարժությունների:»[7]

Վարժ կարդալու կարողության ձևավորման գործընթացի քայլերը.

- Խոսակցական օրգանների զարգացումը, արատների շտկումը շուտասելուկների, առածների, հանելուկների, բառախաղերի և այլ շարժուն խաղերի միջոցով,
- Առողջապահական պահանջների պահպանումը. աշակերտներին պետք է սովորեցնել կարդալիս ճիշտ նստել, գիրքը պահել աչքերից որոշակի հեռավորության վրա, այնպես նստել, որ լույսը նորմալ ընկնի գրքի վրա,
- Բնագրի ընտրովի ընթերցումը, երբ յուրաքանչյուրը ձգտում է ուսուցչի՝ որոշակի նպատակով տված առաջադրանքը ընկերոջից առաջ կատարել, գտնել և կարդալ նյութի տարբեր հատվածները,
- Բնագրի առանձին հատվածներն ընթերցել տալը կարդալու կարողության տարբեր մակարդակ ունեցող աշակերտներին,
- Անգիր արած բանաստեղծությունների ընթերցել տալը, որպեսզի դանդաղ կարդացողը կարողանա սահուն կարդալ, իսկ արագ կարդացողը դանդազեցնի իր կարդալու տեմպը,
- Կարդալու համար նախատեսված նյութը հաճախակի արտագրել տալը. երբ աշակերտը գրելիս անդրադառնում է միևնույն բառին, այն տպավորվում է նրա հիշողության մեջ,
- Ուսուցչի ընթեցման անձնական օրինակը, որին ձգտում են հետևել բոլոր աշակերտները:

Սահուն կարդալը վարժվածության արդյունք է: Աշակերտը պիտի շատ կարդա, որպեսզի վարժվի, որպեսզի կարդալու կարողությունը դառնա հմտություն:[8]

---

[7]ԷդիլյանԳ., Հայոցլեզվիմեթոդիկա, Թ., 1923, էջ 122:
[8]ԳյուլամիրյանՋ.,Մայրենիիտարրականուսուցմանմեթոդիկա, Երևան, 2018, էջ105-106:

4. Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալու կարողությունն ամենադժվարն է ձևավորվում, որովհետև այն շատ մոտ է ասմունքի արվեստին: Բարձրաձայն ընթերցանությունը համարվում է արտահայտիչ, երբ այն գրավում է լսողի ուշադրությունը և հետաքրքրություն է առաջացնում նրա մեջ: Աշակերտների արտահայտիչ ու զգացմունքային ընթերցելու կարողությունը մեծապես պայմանավորված է նրանով, թե նրանք որքան ճիշտ ու ամբողջությամբ են հասկացել ստեղծագործության բովանդակությունը, գաղափարն ու ենթատեքստը, հստակ պատկերացում ունեն տեղի ունեցող դեպքերի, դրանց պատճառահետևանքային կապերի, ինչպես նաև հերոսների նկատմամբ հեղինակի ունեցած վերաբերմունքի մասին: Տարրական դասարաններում արտահայտիչ կարդալու կարողությունը ձևավորվում է գործնական աշխատանքների ճանապարհով, քանի որ ուսուցման այս փուլում միայն տեսական բացատրություններն անարդյունավետ են: Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորումն իրականացվում է նախ դասվարի արտահայտիչ ընթերցանության ճանապարհով, որն ընդօրինակում է աշակերտը, ապա աշակերտներին արտահայտիչ կարդալ սովորեցնելու ուղղությամբ հատուկ աշխատանքի միջոցով: Գոյություն ունի արտահայտիչ ընթերցանության 2 եղանակ՝ **բեմական** արտահայտիչ ընթերցանություն և **դասարանական** արտահայտիչ ընթերցանություն: Դասարանական արտահայտիչ ընթերցանության իրականացման համար անհրաժեշտ է հաշվի առնել հայերենի *կետադրությունը, առոգանությունը, շնչառությունը և ձայնը*:

- **Կետադրությունը.** դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում աշակերտները գործնականորեն ծանոթանում են որոշ կետադրական նշանների և արտահայտիչ խոսքի միջոցների առանձնահատկություններին: Անհրաժեշտ է ուսուցման այս փուլում նաև բացատրել, թե կետադրական կամ առոգանության նշանների առկայության դեպքում ինչպես պետք է կարդալ բնագիրը:
- **Առոգանությունը.** ընթերցողին տալիս է ունկնդրին օգնելու ստեղծագործության յուրաքանչյուրի բառի ու արտահայտության իմաստը, գաղափարն ու ենթատեքստը հասկանալու հնարավորություն: Ճիշտ առոգանություն ընտրելու համար պիտի հասկանալ կերպարների հոգեբանությունը, նրանց արարքների տրամաբանությունը, հեղինակի գործածած կետադրության նշանակությունը:

- **Շնչառությունը.** որպեսզի մարդը ձեռք բերի սեփական ձայնին տիրապետելու կարողություն, առաջին հերթին պետք է ճիշտ շնչել սովորի: Բնականոն պայմաններում համաչափորեն իրար են հաջորդում ներշնչելն ու արտաշնչելը, իսկ բարձրաձայն ընթերցանության ժամանակ շնչառությունը դառնում է անհամաչափ, ինքնակամ և կարգավորող՝ խոր ներշնչումին հաջորդում է փոքր դադարը, իսկ հետո դանդաղ արտաշնչումը:
- **Ձայնը.**կոկորդում գտնվող զույգ ձայնալարերի տատանումից առաջացած հնչյունը կոչվում է ձայն: Ընթերցելիս անհարժեշտ է ձայնն արտաբերել մաքուր, ազատ, բնական, հնչուն և բավականին բարձր: Արտահայտիչ ընթերցանության ժամանակ ամենացանկալին միջին ուժգնություն և միջին բարձրություն ունեցող ձայնն է: Բնագիրն արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել բծախնդիր աշխատանք: Մինչև բնագրի արտահայտիչ ընթերցումը ուսուցիչը պետք է՝

1. Աշակերտների հետ միասին դիտարկի կարդացած ստեղծագործության վերնագիրը, պարզի նրա տրամաբանական կապը բնագրի բովանդակության հետ:
2. Կատեխեզիսային զրույց կազմակերպի բնագրի բովանդակության շուրջ՝ բացահայտելու համար «թաքնված»հարցերը, ընկալելու բնագրի գաղափարը, կերպարների մտքերը, նկարագիրը:
3. Օգնի աշակերտներին բնագրի վրա կատարելու նշումներ, ընդգծելու կարևոր մտքերը, հենակետային բառերը, որոշելու հանգուցային նախադասությունները և դրանց բարձրաձայն ընթերցման առոգանական երանգները:
4. Հարցերի և պարզաբանումների միջոցով աշակերտներին որոշելու ստեղծագործության գաղափարը, ենթատեքստը, կազմի արտահայտիչ ընթերցանության ուղղությամբ իր կողմից իրականացվելիք աշխատանքի պլանը:

Ուսուցիչը բնագիրը արագ չպետք է կարդա.կրտսեր դպրոցականների ուշադրությունը կայուն չէ, կենտրոնանալու կարողությունը դեռևս զարգացած չէ, որի պատճառով աշակերտները չեն կարողանա հետևել ուսուցչի խոսքին և ընկալել բովանդակությունը:

Խոսքի արտահայտչականության և մարդկանց գիտակցության վրա ազդելու գործում հսկայական դեր ունի արտասանական երանգավորումը: Այն խոսքի արտահայտչականության հիմքն է: Լեզվի մեջ ընդունված է արտասանական երանգավորման 4 տեսակ՝ հարցական, բացականչական, հրամայական, պատմողական: Արտասանական երանգի ձևավորման տարրերն են՝ տրամաբանական շեշտը, դադարները, տեմպը, ձայնի ուժգնությունն ու բարձրությունը:

- **Արագ կարդալը** ևս կարդալու որակական հատկանիշ է: Այն համարվում է մեծածավալ լրատվություն ձեռք բերելու լավագույն միջոցներից մեկը, որը հնարավորություն է տալիս քիչ ժամանակում շատ լրատվություն հաղորդելու և ստանալու:

Կարդալուարագությունը բանավոր խոսքի տեմպին հատուկ արագություննէ, որի ժամանակ ընթերցվող նյութի բովանդակության ընկալումը առաջ է անցնում վերարտադրումից: Արագ կարդալու ուղղությամբ աշխատանք կարելի է տանել միայն այն ժամանակ, երբ աշակերտն ազատ կարդում է ամբողջական բառերով և ունի լայն ընթերցողական տեսադաշտ:

Այս կարողությունն ավելի շատ կզարգանա լուռ կարդալու ճանապարհով, երբ համեմատաբար քիչ էներգիա է ծախսվում և խնայվում է ժամանակը: Արագ կարդալու կարողության մշակման ուղղությամբ իրականացվող աշխատանքի արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստում է կարդացածի իմաստի գուշակումը, որը ձևավորվում է կարդալու կարողության զարգացմանը զուգընթաց և պայմանավորված է կարդալու փորձառության մեծացմամբ: Մեթոդական ճիշտ աշխատանքի դեպքում կարդացած նյութի բովանդակության շարունակության կռահման կարողությունը զարգանում է: Այդ կարողության զարգացմանը կարող են նպաստել, օրինակ, այսպիսի վարժությունները.

❖ Ուշադի՛ր կարդացեք այս պատմվածքի վերնագիրը: Եկե՛ք կռահենք, թե ինչի մասին կարող է լինել այս պատմվածքը:

❖ Տալ անավարտ նախադասություններ՝ հանձնարարելով. «Ավարտե՛ք նախադասություններն այնպես, որ հարթվի հերոսների վեճը» և այլն:

Արագ կարդալ սովորեցնելու գործընթացի հիմքում ընկած է վարժ կարդալու հմտությունը: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված են

ստեղծագործությունների դասարանական ընթերցումն իրականացնում են ուսուցիչն ու աշակերտները: Նյութի դասարանական ընթերցումը կարևոր դեր ունի աշակերտի՝ լավ կարդալու կարողության զարգացման և կատարելագործման, ինչպես նաև բովանդակության ճիշտ ընկալման առումով:

Այսպիսով՝ լավ կարդալ նշանակում է կարդալ ճիշտ, հասկանալով, սահուն և արտահայտիչ: Լավ կարդալու հմտությունը միանգամից չի ձևավորվում: Այն իրականանում է քայլ առ քայլ և յուրաքանչյուր քայլ ապահովում հաջորդի ամրությունն ու ամբողջականությունը: Լավ կարդալ սովորեցնելու համար անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել.

- ✓ կարդացած ստեղծագործության յուրաքանչյուր միտքը, դեպքը վերլուծել սեփական տեսանկյունով,
- ✓ բացահայտել և մեկնաբանել բնագրի յուրաքանչյուր բառի, արտահայտության իմաստը և հիմնական միտքը՝ գաղափարը,
- ✓ որոշել հարցերի լուծումները, դրանց տրամաբանությունը, հիմնավորումները, երևույթների կապերն ու հետևանքները,
- ✓ ընթերցանությունից ձեռք բերած տեղեկատվությունը համեմատել իր իմացածի, ճանաչածի, տեսածի, զգացածի հետ, կարդացածը վերարտադրել՝ հասկանալով և սեփական մեկնաբանություններով:[9]

ԳԼՈՒԽ 2.Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման գործընթացի ուղղությամբ իմ աշխատանքային պրակտիկայի արդյունքները

Իմ ուսումնասիրությունների արդյունքում համոզվել եմ, որ կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: *Ճիշտ*, *սահուն*, *հասկանալով*, *արտահայտիչ* կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացող աշակերտները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի

[9]Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:

ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում, հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու ընթացքում հաղթահարվող գործողության վրա: Վատ կարդացողը, որը դեռևս կարդալ չի սովորել և չի տարբերակում կարդացածի գլխավոր ու երկրորդական մտքերը, չի կարողանում տեքստի շուրջ վերլուծական-համադրական աշխատանք կատարել, ըմբռնել նյութի տրամաբանությունը, հետևաբար դժվարանում է ճիշտ և հասկանալով վերարտադրել: Հենց այս պատճառով աշակերտն սկսում է չսիրել և՛ այդ առարկան, և՛ այն դասավանդող ուսուցչին:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Բանն այն է, որ մանուկներին գրքին կապելն առավել դյուրին է, քան երիտասարդներին: Երիտասարդներն արդեն որպես անհատներ, արդեն ձևավորված են և ունեն իրենց նախասիրությունները: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո պետք է փոքրիկների համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես պարտադրել դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ: Դա ուսուցչի գլխավոր խնդիրն է:

2.1 Կարդալու կարողության զարգացման հիմնախնդիրը տարրական դպրոցում

Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Այն նաև օգնում է մարդուն ուրիշների գործունեության ուսումնասիրման ճանապարհով ճանաչել կյանքը, հասկանալ նրա խորհուրդները և սովորել ուրիշի սխալների վրա: Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար Ցավոք, այսօր մեր կրտսեր դպրոցականները չեն կարդում կամ կարդում են ստիպողաբար ու դժկամությամբ՝

գերադասելով հեռուստացույցն ու համակարգիչը: Աշակերտները ոչ միայն գեղարվեստական գրականություն չեն կարդում, այլև ընդհանրապես չեն կարդում:

Ընթերցանության հիմնախնդիրը միշտ էլ արդիական է եղել: Այն հուզել և հուզում է բազմաթիվ մասնագետների: Ջ. Գյուլամիրյանն արտահայտում է այս համոզմունքը և սովորողների հետ անցկացրած հարցազրույցից եկել է այն եզրակացության, որ բազմաթիվ աշակերտներ շատ են ցանկանում կարդալ, բայց հանդիպելով կարդալու տարաբնույթ խոչընդոտների՝ անմիջապես նահանջում են:

Անառարկելի է, որ երեխան սիրի կարդալ, ուսուցիչը պետք է լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:[10]

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Մանուկներին գրքին կապելն ավելի հեշտ է, քան երիտասարդներին; Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ՝ գրաճանաչության ընթացքում, փոքրիկների համար ծնողներն ու ուսուցիչները կարդան հետաքրքիր հեքիաթներ, ինչպես նաև իրենց նույնպես դրդեն դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ: Դա ուսուցչի գլխավոր խնդիրն է:

Հայտնի է, որ գրաճանաչության ուսուցման շրջանում ձևավորվում է կարդալու նախնական կարողությունը: Ցավոք, այդ շրջանում առավել հոգ է տարվում տառերի ծանոթացմանը, քան կարդալու տեխնիկայի մշակմանը: Այսպիսով պետք է հավասարաչափ հոգ տանել թե՛ տառերին ծանոթանալու և թե՛ կարդալու տեխնիկային տիրապետել տալու մասին:

Այս խնդրի արդյունավետ լուծման համար առաջին հերթին աշակերտներին կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլև՝ անծանոթ տեքստեր: Աշակերտներին պետք է նախ սովորեցնել հաղթահարել ընթերցանության հետ կապված մի շարք բնական բարդությունները հաղթահարելու ձևեր:

Կարևոր է նաև, որ աշակերտը հոգեբանորեն պատրաստ լինի և իր մեջ ձևավորի այն համոզմունքը, որ ինքը նոր նյութը՝ հեշտ, թե դժվար, կարող է կարդալ:

---

[10] Օհանյան Ն.,Կարդալու կարողության զարգացումը կրտսեր դպրոցում, Նախաշավիղ, 2010, N7:

Ըստ Զ. Գյուլամիրյանի՝ աշակերտը կարդալ սովորում է ոչ թե նույն նյութը բազմակի ընթերցելով, այլ անծանոթ նյութերի անընդհատ ընթերցմամբ:[11]

Որպեսզի աշակերտ ընթերցողը ցանկանա և կարողանա լսել հեղինակային տեքստը, հասկանա միտքը, նա պետք է սովորի մտածել գրքի մասին, ընդունի այն սիրով ու հասկանալով գնահատի իր համար լավն ու վատը:

Այժմ մշակվել են ոչ ավանդական, ժամանակակից բազմաթիվ հնարներ, որոնց միջոցով աշակերտներն ավելի հաճախ են ընթերցում ինքնուրույն կամ խմբովին: Սրանք նպաստում են կարդալու գործընթացի արդյունավետությանը:

2.2 Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները և խնդրի դրվածքը տարրական դպրոցում

Ժամանակակից մանկավարժության մեթոդաբանության մեջ կարևոր նշանակություն ունեն ընդհանուր գիտական և մեթոդաբանական մի շարք մոտեցումներ, որոնք որոշում են գիտական հետազոտությունների ուղղվածությունը, հայեցակարգային հիմքերը, հետազոտության գործիքակազմը, առանձնահատկությունները: Ընդհանուր գիտական մոտեցումները որոշում են հետազոտության հիմնական ուղղությունը: Ընդհանուր գիտական մոտեցումներից են՝ կառուցվածքային մոտեցումը, **գործառույթային** մոտեցումը, **տեղեկատվական** մոտեցումը և այլն:

Մայրենիի դասի դասավանդման մեթոդիկայի շրջանակներում կիրառելի են մանկավարժական փորձի հետազոտության մի շարք մեթոդներ: Դրանք են՝ **դիտումը, զրույցը, հարցազրույցը, անկետավորումը, մանկավարժական գիտափորձը** և այլն:[12]

Այսպիսով՝ բարձրաձայն ընթերցանությունն արտահայտիչ է համարվում, եթե այն ունկնդրի մեջ առաջացնում է ուշադրություն և հետաքրքրություն: Ընթերցողը բավականաչափ հստակորեն արտահայտում է ստեղծագործության մեջ հեղինակի ասարտահայտած մտքերը, խոհերը, զգացմունքները:

---

[11]ԳյուլամիրյանԶ., Հայոցլեզվիտարրականուսուցմանմեթոդիկա, Երևան, «Զանգակ-97», 2009, էջ 128:

[12] Ասատրյան Լ.Թ., Կարապետյան. Ն.Զ., Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Եր.: Արտագերս, 2016, էջ 35-41:

Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք որքանով են խորությամբ և ճշտությամբ ընկալել, հասկացել ընթերցած ստեղծագործության բովանդակության գաղափարը, տեղի ունեցող դեպքերը, դրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը:

Ստեղծագործության իմաստի, գաղափարի ընկալումը ենթադրում է բնագրի ամբողջական նշանակության ըմբռնում:

Յուրաքանչյուր ծավալուն խոսաքաշարի մեջ կան իմաստային միջուկներ՝ այն բառերը կամ բառերի խումբը, որոնք որոշում են ամբողջ արտահայտության իմաստը: Դրանք **հենակետային բառերն** են, որոնք բանավոր խոսքում առանձնացվում են արտահայտչականության միջոցներով:

Բնագիրն արտահայտիչ արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման նպատակով ուսուցիչը պետք է՝

1. աշակերտների հետ դիտարկի ստեղծագործության վերնագիրը՝ պարզելու համար նրա տրամաբանական կապը բնագրի բովանդակության հետ, որոշի վերնագիրը և ողջ նյութը բարձրաձայն կարդալու արտահայտչական միջոցները, ընտրի դրանցից ամենանպատակահարմարը,

2. երկխոսություն կամ կատեխեզիսային (հարց ու պատասխանի ձևով) զրույց կազմակերպի բնագրի շուրջ (դուրս բերի բնագրի «թաքնված» հարցերը, ճշտի վերնագրին տրվող այն մեկնաբանությունները, որոնցով աշակերտները կընկալեն բնագրի խորությունը, ձևակերպեն նախադասությունները),

3. աշակերտների օգնի, որ բնագրի վրա կատարեն նշումներ, ընդգծեն կարևոր մտքերը, հենակետային բառերը, որոշեն հանգուցային նախադասությունները և դրանց բարձրաձայն ընթերցման առոգանական երանգները,

4. զրույցի տարբեր ձևերում նպաստի, որ աշակերտները որոշեն ստեղծագործության գաղափարը և այն երեխաներին ըմբռնելի դարձնի, կազմի արտահայտիչ ընթերցանության ուղղությամբ իր կողմից տարվելիք աշխատանքի մեթոդական քայլաշարը:

Բնագիրը հասկանալու կարողության մշակման համար պետք է հասնել այն բանին, որ ուսումնասիրվող նյութը *«տեղավորված»* լինի աշակերտների սեփական հայացքների ու համոզմունքների համակարգում:

Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորման գործընթացը բազմաշերտ է: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է ամենօրյա համակարգված աշխատանք՝ հաջորդաբար լուծելով որոշակի խնդիրներ.

I քայլ՝ կարդալ բնագիրը, սահուն և հասկանալով,

II քայլ՝ կատարել բառային աշխատանք.որոշել հենակետային բառերը, մեկնաբանել անծանոթ բառերն ու արտահայտությունները, տվյալ բնագրում գտնել բազմիմաստ բառերի նշանակությունը,

III քայլ՝ վերլուծել բնագիրը՝ բացահայտելով դեպքերի ընթացքը, գործողությունների զարգացման պատճառահետևանքային կապերը,

IV քայլ՝ որոշել գործող անձանց բնավորությունները, զգացմունքները և տրամադրությունը՝ ստեղծագործության տարբեր հատվածներում,

V քայլ՝ պարզաբանել ստեղծագործության գաղափարը, ենթատեքստը և հեղինակի վերաբերմունքն այս ամենի նկատմամբ:[13]



[13]ԳյուլամիրյանՋ., Արտահայտիչկարդալուկարողությանձևավորմանհնարները, Նախաշավիղ 3-4,2001:

2.3 Մեթոդական ցուցումներ, որոնք կնպաստեն տարրական դպրոցում սովորողների արտահայտիչ կարողության ձևավորմանը

Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար առաջարկվում է .

- **Պահել աշխատանքային տետր:** Գիրքն ընթերցելուց հետո հարկավոր է դուրս գրել բնագրի գլխավոր մտքերը՝ հետագայում ընթերցածը վերհիշելու համար: Ընդ որում՝ կարելի է դուրս գրել ոչ միայն ընթերցած նյութի կարևոր մտքերը, այլև դիտած ֆիլմի հերոսի արտահայտած մտքերը, գաղափարները, որոնք սովորողին մղում են մտածելու:
- **Վերընթերցել:** Շատ հաճախ գիրքն ընթերցելիս ընթերցողը բաց է թողնում որևէ թերթ, գլուխ. ընթերցելիս ընթերցողը երբեմն կենտրոնացած չի լինում և չի հասկանում ընթերցածը, այս դեպքում միակ տարբերակը նյութի վերընթերցումն է, որը հնարավորություն է տալիս ևս 1 անգամ ընթերցել հատկացված մասը և ընկալել այն:
- **Սա չպետք է շփոթել աշխատանքային տետրի հետ:** Տարբերությունն այն է, որ դուրս գրվելիք միտքը տարբերվում է միանգամից, ճիշտ է, այն հետո գրառվում է աշխատանքային տետրում, բայց առաջին հերթին հարկավոր է մի քանի անգամ արտաբերել գլխավոր նախադասությունը, որից հետո անցնել գրավոր նշումներին:
- **Կատարել շեշտադրում կարդալու որակի վրա:** Ամենակարևոր պայմանը այն է, որ չպետք է կարդալ շատ մեծ քանակությամբ գրքեր, կարելի է կարդալ քիչ, բայց արդյունավետ: Խոսքն այն մասին է, որ ընթերցողը պետք է վերլուծի յուրաքանչյուր գիրք, որ ընթերցում է:
- **Ստեղծել:** Ընթերցանությունը արդյունավետ է, երբ այն իրականացվում է մի քանի ձևաչափով՝ ***ավանդական ընթերցանություն,էլէկտրոնային, առդիոգրքեր:*** Կարելի է միանգամից մի քանի գիրք ընթերցել, յուրաքանչյուրը տարբեր աղբյուրներից: Դա հնարավորություն է տալիս ավելի լավ պլանավորել ընթերցանությունը:
- **Կատարել ընդմիջում: Որևէ գրքի ընթերցումն ավարտելուց հետո պետք չէ** անմիջապես անցնել մյուս գրքի ընթերցմանը, հարկավոր է որոշ ժամանակ ընդմիջում տալ՝ մոտ 4-6 օր, որը միայն հնարավորություն կտա ավելի լավ հասկանալու ընթերցածը, դրանից հետո կարելի է անցնել նոր գրքի ընթերցմանը:

Ինչ է հարկավոր անել, երեխաների ընթերցանության և ճանաչողական հմտությունները զարգացնելու համար.

- ✓ Երեխաների համար պետք է կարդալ որ միայն նոր պատմություններ, այլև հին պատմությունները ամեն օր:
- ✓ Օգնել երեխային՝ հասկանալու բառերի իմաստը, բացատրել, թե ինչի մասին է խոսքը՝ կիրառելով փոխներգործուն մեթոդներ:
- ✓ Գրքում ներկայացված տեղեկությունները զուգորդել այլ իրադարձությունների հետ, որոնք կօգնեն երեխայի հետաքրքրությունների զարգացմանը: Ներգրավել երեխային քննարկելու տարբեր թեմաներ:[14]

2.4 Արտահայտիչ կարդալու կարողությունների զարգացումը հետաքրքրաշարժ հնարներով

Տարրական դպրոցում արտահայտիչ կարդալու կարողության զարգացմանը նպաստում են.

Խաղ-վարժանքների անցկացման նպատակը՝

նպաստել աշակերտների կարդալու կարողության ճանաչողական զարգացմանը, ինչպես նաև դյուրին և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանական անցումը՝ տառ-բառ-բառակապակցություն-նախադասություն, ինչպես նաև լուռ ընթերցումից բարձրաձայնին անցումը:

Վարժանք – առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղեր են, որոնց կատարումը հաճույք է պատճառում աշակերտներին: Առաջարկվող առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի օրվա դասիբառապաշարին, ինչպես նաև նպաստի աշակերտների բառապաշարի զարգացմանը: Առաջադրանքների աստիճանական բարդացումը պայմանավորված է աշակերտների կարդալու կարողությունների զարգացմամբ: Հաշվի առնելով դասարանի աշակերտների ունակությունները՝ ուսուցիչը կարող է դանդաղեցնել կամ արագացնել այդ գործընթացը:

[14]Գյուլամիրյան Ջ., Ընթերցանությունը որպես ուսուցման հիմք, Նախաշավիղ, 2010:

Եզրակացություն

1. Մասնագիտական մեթոդական գրականության մեջ թեև ընդհանուր մեթոդիկայում տրված են արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման որոշակի մեթոդական ցուցումներ, բայց մասնագիտական գրականության մեջ գրաճանաչության այս շրջանի վերաբերյալ նյութերը քիչ են:

2. Առաջին դասարանում՝ գրաճանաչության ընթացքում, շեշտադրվում են առավելապես տառաճանաչության, կարդալու նախնական կարողության ձևավորման խնդիրները՝ անտեսելով արտահայտիչ կարդալու կարևորությունը: Այնինչ այդ կարողությամբ է պայմանավորված կարդացածը հասկանալու կրտսեր դպրականի ունակության ձևավորումը:

3. Եթե գրաճանաչության դասերի ընթացքում կարևորվում է և աշխատանք է իրականացվում առաջին դասարանցիների արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման ուղղությամբ, ապա ոչ միայն արդյունավետ է դառնում գրաճանաչության գործընթացը, այլև աշակերտները սովորում են հասկանալով կարդալ:

Առաջարկություններ

1. Տարրական դասարանների աշակերտների համար արտադրել ճանաչված ասմունքողների, դերասանների դերակատարումներ, որոնք մայրենիի դասերի ընթացքում ունկնդրելով՝ սովորողները ձեռք կբերեն արտահայտիչ խոսքի նրբությունները:

2. Մայրենիի առարկայական ծրագրում ըստ դասարանների ներկայացնել այն մակարդակները, որոնք պիտի տիրապետեն աշակերտները:

3. Հայաստանում հրատարակվող մեթոդական հոդվածներում և ձեռնարկներում տպագրել արտահայտիչ ընթերցանությանը նվիրված մեթոդական ցուցումներ:

Օգտագործված գրականություն

1. Գյուլամիրյան Ջ., Ընթերցանությունը որպես ուսուցման հիմք, Նախաշավիղ, 2010
2. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողության և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Ե., Լույս, 1998:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
4. ԷդիլյանԳ., Հայոցլեզվիմեթոդիկա, Թ., 1923:
5. Օհանյան Ն., Կարդալու կարողության զարգացումը կրտսեր դպրոցում, N7, Նախաշավիղ, 2010:
6. Бабанский Ю. К., Проблемное обучение как средство повышения эффективности учения школьников, Ростов-на-Дону, 1970.